

Ի. ՄԻՆՑ

18412

Ն Ո Ր
ԻՆՏԵՐՎԵՆՑԻԱՆ
Հ Ն Ի
Լ ՈՒՅՍՈՎ

ԳԵՑԶԲԱՑ

ԹԵՐԵՎԱՆ

1931

01 JUL 2013


18.4/2

13 JAN
27 SEP 2006

327
U-72

Ի. Մ Ի Ն Ե

48



ՆՈՐ ԻՆՏԵՐՎԵՆՑԻԱՆ
ՀՆԻ ԼՈՒՅՍՈՎ

Քարգմ. Ա. Գեվորյան

ԳԵՎ

1981 p.

ՅԵՐԵՎԱՆ

Պետերատի տպարան
Գլավիտա № 6969
Հրատ № 1:61
Պատկեր № 542
Ցի. 3000

Պորհրդային Միության առաջ նորից ծառանում և
ինտերվենցիայի վտանգը: Լրագրերի եջերում նորից
են շողողում մեր հանրածանոթ Փրանսական գեներա-
լայնների անունները, վորոնք ամենաթունդ մասնակցու-
թյունն են ունեցել նախկին ինտերվենցիայում, իսկ
դրանց թիկունքում պտտվում և Պուանկարեյի դեմքը,
վորի անունը վաղուց արդեն համազոր և պատերազմի:
Թատերաբեմ յեն դուբս յեկել հին գեներալներից Միլ-
լերը, վորը հյուսիսային սպիտակ բանակի հրամանա-
տարն էր, Լուկոմսին՝ Դենիկինի աջ բաղուկը, Շկուրոն,
վորը նոր կողոպուտի ու բռնությունների հույսով յուր
ճարտիկ ձիափարժությամբ Փարիզի կրկեսներում
փրամսիացի սիրողների նրբագգացուրյունն և չարժում:
Սպիտակ գեներալները նորից իրանց բանակները հաշ-
վատման յեն յենթարկում վորոնց ջարդուփչուր յեղած
մնացորդները շատ յերկրներում կատարում են ժան-
դարմների՝ հեղափոխության խեղդիչներին հատուկ դե-
քը, իսկ նրանց տերերը Ռյաբուչինսկիները, նոր ինտեր-
վենցիայի առթիվ հաշվատման յեն յենթարկում իրենց
հնարավոր շահումները:

Տերերի հետ չարժվում են նաև նրանց հավատարիմ
լուքեյները, մենչևվիկներն ու եսերները, վորոնք քո-
ղարկում ու արդարացնում են հակահեղափոխական այդ
աշխատանքները: Մենչևվիկյան և եսերական մամուլի
եջերից հեղեղի նման կեղտ ու բամբասանք են թափում
ուժգին վայնասուն բարձրացնելով կոչ են անում խոր-
հուրդների դեմ նոր հարձակման անցնելու:

Նորից ի մի յեն հավաքվում բոլոր նրանք, վորոնց

Հետ մեզ թվում եր, թե 10 տարի առաջ հաշիվները մաքրել ենք: Յեվ իսկույն հարց ե ծագում, ի՞նչ ե շարժում այս ուժերին, ո՞վ ե աչք մեռելներին հարուժյուն տալիս: Ո՞վ ե ստիպում նրանց ահնհայտ կերպով, Հին ցարական Փորձայով ու Հին ուսադիրներով հանդես դալ Փարիսի փողոցներում:

Մերիքի կարմիր պարտիզանները վաղուց արդեն պատասխանել են այդ հարցերին իրենց ծաղրական քայակներով, վորսիսին մեզ ծանոթ ե քաղաքացիական պատերազմների ժամանակներից:

Մուկդիրն անգլիական,
Ուսադիրը ռուսական,
Ծխախոտը հայդուական,
Ուսկի իշխանավոր:

Պարտիզաններն այդպես եյին պատկերացնում Կոլչակին, անգլիացիները նրան զինեցին, Փրանսիացիները սնուցին ու ազդամթերք մատակարարեցին, ճապոնացիները ոգնեցին ե բոլորը միասին ազմիրային մեր դեմ հանեցին:

Լայն մասսաներն իրենք սեփական փորձով զիտեն, թե ով ստեղծեց, կազմակերպեց, առաջ մղեց ու ողնեց ռուսական հակահեղափոխությանը, հասկացել են, վոր յեթե չլիներ ինտերվենցիան ու անգլիացիների, Փրանսիացիների ու ամերիկացիների միջամտությունը, Ռուսաստանում քաղաքացիական պատերազմը այնպիսի կատաղի բնույթ չեր տանա ե չեր խլի մեզանից մեր բոլոր ուժերը: Լայն մասսաները զիտեն, վոր յեթե չըլիներ ինտերվենցիան, չեր լինի նաև քաղաքացիական պատերազմը, վորը յերեք տարի շարունակ դրել եր Խիշխանության առաջ լինել-չլինելու խնդիրը:

Արյունով ձեռք բերված այս փորձի միջոցով

բանվորադուղացիական մասոաները այժմս ել կկարողանան հասկանալ այդ նոր արչավանքի նպատակը:

Յեվ իրող, հոկտեմբերյան հաղթանակի ընթացքն ու յեղքն ե վորոշող պատճառներից յերկուսը, պետք ե համարել, գրեթե ամենակարեվորները: Նախ, 1917 թ. հոկտեմբերին, բալլչեվիկներին կողմնակից եր վոչ միայն պրոլետարիատը, այլ ե ինչպես Ռուսաստանի նույնպես ե ազգային փոքրամասնությունների շրջանների դուղացիական լայն մասսաները: Հույսը կտրելով բուրժուական պետության ձեռքից ստանալու հող ե տառապելով ժամանակավոր կառավարության մեծապետական քաղաքականությունից, վորը շարունակում եր ցարիզմի հափշտակողական-թալանչիական գաղութային քաղաքականությունը, ռուս դուղացիական ե ճնշված ժողովուրդների աշխատավորական լայն մասսաները համերաշխորեն ողնության հասան պրոլետարիատին ու այդպիսով նպաստեցին շուտափոշի կերպով պարտության մատնելու կալվածատերերին ե բուրժուազիային:

Յերկրորդ՝ ոտար իմպերիալիստները հնարավորություն չունեցան շտապ ողնության հասցնելու Չարդված ռուսական հակահեղափոխությանը, վորովհետե հենց այդ պահին եր, վոր դերմանացիներն ու անգլիացիները միմյանց բզկտում եյին ե նրանց ձեռքերը ազատ չեյին Խ: Հանրապետությունը ջախջախելու: Հենց այդ ժամանակներումն եր, վոր իմպերիալիստական պատերազմը հասել եր իր ամենարարձր գագաթնակետին, մի կողմից դերմանացիների ու իրենց դաշնակիցների ե մյուս կողմից անգլիացիների, Փրանսիացիների ու իրենց դաշնակիցների միջով: Չեռքերը կապված եյին ե չկար մեկը, վոր ողնության հասներ ռուսական բուրժուառիտին:

Բուրժուազիան յերես առ յերես մնաց պրոլետարիատի հետ, վորին հետեւում էին դյուզացիական մասսաները, և պարտւած դուրս յեկավ:

Հենց դրանով էլ բացատրւում է, վոր Հոկտեմբերյան հեղափոխությունը վորին ղեկավարում էր բալչեվիկյան կուսակցությունը Լենինի դիւստրուբյամբ, հաղթական մարշով առաջ ընթացավ ամբողջ յրկրում: Լենինն այդ շրջանը անվանում է «Հոկտեմբերյան հաղթական արշավ»-ի շրջան: Բաղմաթիվ շրջաններ լսելով Պիտերում բուրժուական ժամանակավոր կառավարության անկման լուրը, իսկույն և յեթ, առանց վորեւէ արդելքի հաստատում էին Ս. Իշխանություն: Բավական էր ստանալ հեռագրալուրեր Պիտերի հաղթության մասին, վոր իսկույն քէլին տեղական բուրժուական իշխանություններին: Ճիշտ է, այն տեղերում, վորտեղ բուրժուազիային հաջողւում էր ուժեր ստալ մղել, ինչպէս այդ պատահեց Մոսկւայում, այնտեղ պրոլետարիատը կրում էր դպալի կորուստներ, սակայն ուսական հակահեղափոխությունը ամբողջ յերկրում ջարդ ու փշուր յեղավ. և անդոր էր այլևս Սորհրդայն Իշխանության դեմ դուրս գալու:

Սակայն այդ բավական չէր: Յերբ ուսական բուրժուազիան կրկին փորձեց մենչեվիկներին և ետերներին սգնությամբ Ս. Իշխանության դեմ դուրս գալ և հեղափոխության թիկունքում՝ Պետրոգրադում՝ դավադիր կերպով կազմակերպեց հունկերների ապստամբությունը, Կերենսկու միջոցով Փրոնտից բերվեցին կազակներ, ճակատային հարձակում գործելու համար հեղափոխության դեմ, միևնույն ժամանակ փորձ էր արվում Դոնի կազակներին ապստամբեցնելու. բայց հակահեղափոխական յեկույթները ձնչելու համար. Ս. Իշխանության

նից պահանջվեց միայն մի քանի որ: Սրղեն 1917 թ. նոյեմբերին, այն ժամանակվա Ռուսաստանում գոյություն չունէր այլևս վոչ մի կազմակերպւած ուժ, վոր պիտին կարողանար Ս. Իշխանության դեմ դուրս գալ: Իրա լավագույն սպացույցն է սահմանադիր ժողովի ցրումը: Պետերբուրգում՝ սահմանադիր ժողովի շուրջը ժողովել էր մի խմբակ, բաղկացած մի քանի հարյուր մարդկանցից, զլիավորապէս ինտելիգենտներից ոֆիցերներից և Պրետորատենսկու դնդի փոքրաթիվ դորամասերից, վորոնց մեծագույն մասը կաշառվածներ էին:

Քաղաքացիական պատերազմի առաջին ետապը, վորը կապիտալիստների ու կարլածատերերի իշխանության տապալման ետապն էր, վերջացավ բալչեվիկներին հաղթությամբ, վորովհետև նախ՝ Պերջինիս հետ ընթանում էին ժողովրդի հիմնական մասսաները և յերկրորդ՝ իմպերիալիստներից վոչ մեկը չկարողացավ ոգնության հասնել ուսական հակահեղափոխությանը:

Իսկ յեթ իմպերիալիստներին չհաջողվեց ոգնելու ուսական հակահեղափոխությանը, դա յերբեք չի նշանակում, թե նրանք չեն փորձել վոչինչ անելու: Ընդհակառակն՝ հենց վոր Հոկտեմբերյան հեղափոխության առաջին լուրը տարածվեց, կապիտալիստական մամուլը աղաղակեց՝ թե միակ մարդը, վոր կարող է ջախջախել բալչեվիկներին և աշխարհն աղատել բայչեվիկյան պատուհասից, այդ Կալեդինն է, վորն այն ժամանակ Դոնի կազակների հրամանատարն էր: Նրա մասին շատերն էին դրում, բացի դրելուց փոխադրում էին դրամ, և տրամադիր էին ուղարկել նրան ռազմամթերք և ավտոմոբիլներ:

Ճիշտն ասած Հոկտեմբերյան հեղափոխության

հենց յերկրորդ որը իմպերիալիստներն իրենց առջև
ինչոր դրեցին զինված ուժերի միջոցով տապալել բայլ-
չեվիկներին և առաջ մղեցին ինտերվենցայի հարցը :

ինչո՞ւ համար :

Յեթե վերցնելու լինենք նրանց լրագրերը, դրբերը
ինտերվենցայի բուն պատճառների նրանց բացատրու-
թյունները, իսկույն աչքի յե ընկնում մի կետ, վորով
իմպերիալիստական դիվանագետներն, գեներալներն ու
պատմագիրները պատճառաբանում ու կրկնում եյին թե
ուռաները պատերազմում մեզ լքեցին, խախտեցին պայ-
մանագիրն ու մեզ մատնեցին գերմանացիների ձեռքը :
Իայլչեվիկները հաշուություն կնքեցին, ահա թե ինչն
եր ստիպում մեզ հարձակվելու խորհուրդների յերկրի
վրա :

Ռուսական բանակը իմպերիալիստական պատերազ-
մի մի քանի տարիների ընթացքում կոմպրեսսի դեր եր
կատարում ցալն ամօքելու համար, անդլո-Ֆրանսա-
կան ռազմածակտից գերմանական ուժերն քաշելով
դեպ իրեն : Յուրաքանչյուր անգամ, յերբ գերմանա-
ցիները մեծամեծ ուժեր եյին կենտրոնացնում ու հար-
ձակում սկսում անդլո-Ֆրանսական զորքերի վրա,
ուռական բանակը յուր հարձակումները ուղղում եր
գերմանացիների դեմ, ստիպելով նրանց դադարեցնե-
նելու հարձակումները արեվմուտքում և դառնալ դեպի
նոր թշնամին :

Այդպես եր պատերազմի առաջին որերին, յերբ
գերմանական բանակը ջարդելով անդլո-Ֆրանսական
ուժերին, արագորեն Փարիզի վրա յեր արշավում, ուռ-
ական բանակը դեռ յեվս անպատրաստ վիճակում, զո-
րահավաք լրիվ չավարտած, ուժերը չկենտրոնացրած,
ցտիպվեց հարձակվելու Արեվելյան Ֆրանսիայի վրա :

վորակողի հետ կասեցնի գերմանացիներին ու դադարեց-
նի նրանց շեշտակի հարձակումները : Հարյուր հազա-
րանոց ուռական բանակը այդտեղ ջարդվեց, վորի մի
մասը խեղդվեց Մազուրյան լճերում, մի մասը զոհ
գնաց գերմանացիների թնդանոթային և բրաննվիկների
կրակին, իսկ մնացած մասը գերի ընկավ, բայց և այն-
պես Փարիզն աղատվեց :

Ճիշտ նույնը կրկնվեց Վերդենի նշանավոր կռիվնե-
րի ժամանակ, յերբ քիչ եր մնացել, վոր գերմանացի-
ները վերցնեցին դեպի Փարիզ տանող այդ բաշանին :
Նորից հարյուր հազարավոր ուռս գինվորներ շարտվե-
ցին դեպի Գալիցիա թանձր հեղեղի նման, հաճախ ան-
դեն, զնդացիրների սպանիչ կրակի տակ հարձակում-
ներ զործելով Ավստրո-գերմանական դիրքերի վրա :

Ռուսական բանակը այս անգամ ել ստիպեց գերմա-
նացիներին դադարեցնելու հարձակումները, վորով և
աղատեց Վերդենը :

Իսլորի համար պարզ եր, վոր Հոկտեմբերյան հե-
ղափոխությունը վերջ պիտի դներ արյունահեղություն-
ներին և աղատեր միլիտանավոր ուռս բանվոր-դյուղա-
ցիներին իմպերիալիստական պատերազմից : Անդլո-
Ֆրանսական իմպերիալիստների համար Հոկտեմբեր-
յան հեղափոխությունը նշանակում եր տանյակ միլիտ-
անվորների կորուստ, վորպես թնդանոթային մտի, իսկ
այդպիսի կորուստն իրենց հաղթանակը գերմանացիներ-
ի վրա կասկածելի յեր դարձնում և զժխորացնում
անդլո-Ֆրանսական դիշատիչների պայքարը գերմանա-
ցի կողմպաշինների դեմ : Ահա թե ինչու Փարիզի և Լոն-
դոնի բանվորները նիզակ եյին ձոճում պրոլետարական
հեղափոխության դեմ և իսկույն հարց հարուցին միջա-
ստելու մեջ իրեն գործերին, առաջադրելով ինտեր-

վենցիան, վորպեսզի տոխպեն մեզ շարունակելու պատերազմը:

Արդո՞ք ինտերվենցիայի դիտավոր պատճառը Ռուսաստանի պատերազմից դուրս դա՞ր՞ն էր, ինչպես աղմկում էյին իմպերիալիստները: Ռուսաստանի պատերազմից դուրս դայն ստիպեց իմպերիալիստական կողոպտիչներին խորտակելու ինչպես միլիոնավոր ռուսների, նույնպես և իրենց բանվոր գլուխներին մի մասի կյանքերը:

Հոկտեմբերյան հեղափոխութեան առաջին որերին դործը ինտերվենցիայի մասին յեղած խոսակցություններից և սպառնալիքներից այն կողմը չէր անցնում, ո՞ւմ պետք է ուղարկել մեզ վրա, քանի վոր նրանց ամբողջ ուժերը գերմանացիների դեմն էյին ուղղված:

Շուտով Խ. Իշխանությունը պատգամավորներ և ուղարկում գերմանացիների մոտ հաշտութեան բանակցություններ վարելու:

Հաշտութեան բանակցությունները մի փոքր ցրեցին ինտերվենցիայի մասին տարածված լուրերը: Յերբ մենք Բրեստ-Լիտովսկի գնացինք գերմանացիների հետ հաշտութեան բանակցություններ վարելու, այն ժամանակ գերմանացիները կարծեցին, թե դործ ունեն այնպիսի դիվանագետների հետ, ինչպիսիների հետ նրանք սովոր էյին շարունակ խոսելու, այսինքն խորամանկ ճարպիկ իմպերիալիստների, վորոնք թաղնված են հեղափոխական Ֆրազների ներքո, բայց գործնականում մտածում են, թե վորքան պատառ վերցնեն իրենց համար: Յերբ մենք ասում էյինք, թե հաշտությունը պետք է կնքել, ճառանց աննեկսիայի և կոնտրիբուցիայի, նրանք կարծում էյին, վոր այդ մեզ համար բարձրակոչ

Ֆրազներ են, սկզբում համաձայնվեցին, սակայն յերբ պարզվեց, վոր բայչեիկները խսկապես ցանկանում են դեմոկրատական հաշտություն և գերմանացի դեներալների դիմնելու վրայով ուղղակի դիմում արին գերմանացի ժողովրդին, հաշտութեան կոչ ուղղելով, այն ժամանակ գերմանացիները սխեցին խոսել մեզ հետ այլ լեզվով: Գերմանացի գեներալները «առանց աննեկսիայի և կոնտրիբուցիայի» ֆորմուլան հասկացան ույնպես, վոր մեզ ուլտիմատում առաջադրեցին, պահանջելով Լեհաստանի, Լիտվայի, Լատվիայի և Ուկրայնայի մի մասը, և վոր մենք պետք է վճարելինք ահագին կոնտրիբուցիա, ապա թե վոչ նրանք պետք է վերջս կըսեյին պատերազմը մեր դեմ: Միջոցորտից վառողի հոտ էր փչում: Շատերը հավատացած էյին արդեն, վոր բանակցությունները խզվեցին և նորից շարունակվելու յե պատերազմը Ռուսաստանի և Գերմանիայի միջև:

Գերմանացիների հետ տեղի ունեցած այդ վեճի տուրբիլ գաշնակիցները պահ մի դադարեցին ինտերվենցիայի մասին խոսելուց: Դրանից յերկու յերեք շաբաթ առաջ բղավում էյին ինտերվենցիայի մասին, իսկ այժմ սկսում են մեզ հետ բանակցել, խոստանալով ամեն տեսակի ծառայություն մատուցել, միայն թե դուրս բերեյին մեզ գերմանացիների դեմ: Մեզ մոտ էյին դալիս ֆրանսիացիները, անգլիացիները, ամերիկացիները, վորոնք առաջարկում էյին մեզ ռազմամթերք, դրամ և ռազմապետ ուժեր: Այդպիսի մի այցելութեան առթիվ, Լենինը միտինգներից մեկում այսպես է պատմում. «Գալիս է հայտնի միապետական, ֆրանսական նշանավոր սփիյեր, և բացարձակ կերպով հայտարարում

ե, վոր ինքը բայլչեվիկներն քաղաքական թշնամին է, սակայն այժմ բայլչեվիկներին առաջարկում է «խաղաղություն և բարեկամություն» Գերմանիայի դեմ կըովելու համար:

Խոշոր սխալ կլինե՞ր մեր կողմից, յեթե մենք լըրջորեն ընդունելու լինե՞յինք իմպերիալիստ— գիշատիչների այդ «բարեկամություն և խաղաղություն» լուրուհը: Նրանց հաշիվը պարզ եր:

Նրանք ասում եյին, վոր Խ. Հանրապետությունը դեռ մանուկ է, վոր նա գերմանական իմպերիալիզմի դեմ ունեցած վճռական ընդհարման դեպքում հողս կցնդի: Այդ դեպքում գերմանացիները Արեվելքում ձեռք կբերեն մեծ պատառ, գրավելով Լատվիան, Եստոնիան, մասամբ Ֆինլանդիան, ավելի զիջող կդառնան և Խորհրդային Հանրապետության կորուստների հաշիվին դաշնակիցներին հնարավոր կլինի կնքել ավելի ձեռնտու հաշտություն: Յեթե Խ. Իշխանությունը միանգամից չը պայթի գերմանացիների հարվածների տակ և մի փոքր ել շարունակի պատերազմին դիմանալ, նա դեպ իրեն կքաշի գերմանացիների ուժերի մի մասը, և կթեթեվացնի Անդլո-Փրանսիացիների ծանր դրությունը:

Բայց այդքանը բավական չեր: Խ. Իշխանությունը պետք է հետ կանչեր հին ոֆիցերությանը, հին զենեբալներին, առանց վորոնց պատերազմ մղելը անհնարին եր, իսկ պատերազմ մղելու պրոցեսում հին ոֆիցերությունը յուր ձեռքը կվերցնե՞ր ամբողջ գործը, կաղմակերպելով հակախորհրդային ուժերին և այդպիսով կվոչընչացնե՞ր Խ. Իշխանությունը:

Յերկու դեպքումն էլ Խ. Իշխանությունը պետք է ասպալվեր:

Գերմանացիների դեմ պայքարելու համար «դաշնակիցների» առաջարկած ոգնությունը վոչ թե ոգնություն եր, խորհուրդներին— բայլչեվիկներին, վորքան մի փորձ եր գերմանացիների դեմ պատերազմ մղելով խորտակել Խ. Իշխանությունը: Հենց դրանով է բացատրվում, թե ինչու համար վորջ ուսական բուրժուատրվում, մանր բուրժուատրիան բոլոր քաղաքական կուսակցությունները, հատկապես մենչեվիկ-եսերական լաբյաները թղավում եյին ըզդեմ հաշտության գերմանացիների հետ և միշտ ցականում եյին մեղ պատերազմի մղել գերմանացիների դեմ, ու զցել մեղ անդլո-Փրանսիացիների պատրաստած ծուղակը:

Բուրժուադիայի և ինտելլեկտների թակարգն ընկան միայն «ձախ» կոմունիստները ընկ. Բալխարիկի առաջնորդությամբ: «Ձախ կոմունիստները» գերմանացիների հետ այդպիսի «ամթալի» հաշտություն կնքելուն դեմ դուրս յեկան, չցանկանալով նույնիսկ կարծատե ղնադատար, առանց հաշիվ առնելու բանվորների և գյուղացիների հողնաձությունը իմպերիալիստական պատերազմից, վորի հետեվանքով յերիտասարդ Խ. Հանրապետությանը հնարավորություն չեր տրվում մի փոքր աղատ շնչելու: Պարզ եր, վոր մեղ նորից գերմանացիների դեմ պատերազմ մղելու գործը ձեռնտու եր Անդլո-Փրանսական իմպերիալիզմին: Յեվ միայն համառ պայքարից հետո Լենինին հաջողվեց փրկելու Խ. Իշխանությունը իմպերիալիզմի լարած թակարդից և կնքել գերմանացիների հետ հաշտություն:

Իրեստի հաշտությունից հետո իմպերիալիստները հասկանալով, վոր իրենց մանյովրները բայլչեվիկների համար պարզ է, նորից անցան ինտելլեկտայի նա-

խապատրաստական աշխատանքներին, պատրվակ բռնելով թե պետք է վերականգնել Արևիկյան Փրոնտը գերմանացիների դեմ:

Սակայն այս անգամ ել նրանց ուժերը անբավարար եյին. գերմանացիները Բրեստի հաշտությունից անմիջապես հետո իրենց ուժերը քաշեցին ուսսական Փրոնտից դեպի արևմտյան Փրոնտը պատրաստվելով վճռական հարձակում դործել անդլո-Փրանսիացիների դեմ:

Իսկ յերբ պետք յեղած ուժերը գտնվեցին (այդ գերմանացիների պարտությունից հետո եր) այն ժամանակ ուսսական բանակի կարիքը այլևս չեր զղացվում: Վերջանում է իմպերիալիստական պատերազմը: Այսպիսով ինտերվենցիայի պատճառը վորոշ ժամանակ համարվում էր Ռուսաստանի պատերազմից դուրս դաշը, քանի դեռ չարունակվում էր պատերազմը գերմանացիների դեմ, կամ ավելի ճիշտն ասած, քանի դեռ նրանց թվում էր, թե գերմանացիները ավելի ուժեղ են, քան անդլո-Փրանսիացիները: Բայց ինտերվենցիայի ամենաբարձր աստիճանը սկսվում է հենց գերմանացիներին ապստեղելուց հետո, յերբ այլևս ուսսական բանակի կարիքը չեր զղացվում: Նույնիսկ այն շրջանում, յերբ Ռուսաստանի պատերազմից դուրս դալու հարցը այնքան այրող էր, իմպերիալիստները ձգտում էյին կրկին պատերազմի մեջ զցել Ռուսաստանին, բայց վոչ խորհրդային Ռուսաստանը. Սորհրդային Իշխանությունը ինչ գնով էլ վոր լինի, պետք է վոչնչանար:

Նույն իմպերիալիստական ազբյուրները, իսկ նրանց հետ ել միասին ցավոք սրտի ասած խորհրդային մի քանի հեղինակներ ինտերվենցիայի ուրիշ պատճառ են բերում. այդ բայլչեվիկների հրատարվելն է ոտարյեկրյա

կոպիտալիստների պարտքերը վճարելուց: Ըստ առաջին հայացքի, այդ պաճառը կարծես, թե խելքի մոտիկ է: Յեվ հերավի: Ինքնակալության միայն նախապատերազմյան շրջանի պարտքերի գումարը կաղմում էր մոտ 7½ միլիարդ վոսկի ուուրի, բացի այդ՝ հենց պատերազմի ընթացքում մի քանի տասնյակ միլիարդների էլ պայժանագրեր էյին կնքված: Այդ կորցրած միլիարդների պատրվակով իմպերիալիստական մամուլը ամենայն որ հասկացնել էր տալիս լայն մասսաներին, ամենայն զրամ չկա, վորսկեղի կարողանանք քաղցած ու թե դրամ չկա, վորսկեղի կարողանանք քաղցած ու թշվառ ժողովրդի կյանքը բարելավել, ինտերվենցիաները

գալիս էյին կողոպտելու ուուս բանվորներին ու գյուղացիներին: Պարզ է, վոր այդ միլիարդների կորուստը, վորոնց տոկոսը միայն կարելի յեր ստանալ տասնյակ միլիոններով խորհրդային յերկրի աշխատավորներից, մեծամեծ վնասներ էր հասցնում ճարտակալած միլիոնատերերի զբոսաններին և կատաղեցնում էր իմպերիալիստական բանկիրներին: Բայց այդ կորած վոսկու դեբեր չէյին, վոր այնքան յերկար ժամանակ ինտերվենցիայի էյին մղում իմպերիալիստներին:

Ամենից առաջ պետք է աչքի առաջ ունենալ, վոր բոյոր յերկրները պատերազմի շրջանում աճողին փոխառություններ էյին տալիս միմյանց, ամենից շատ Ամերիկան էր տալիս, վորը այս բոսկիսիս համարվում է համաշխարհային բանկիր: Բայց նրանցից վոչ մեկը, վոչ Անդլիան, վոչ Պրանսիան և վոչ էլ Իտալիան մինչև այժմ չեն վճարել իրենց պարտքերը, բայականանալով միայն չնչին տոկոսներ վճարելով, համենայն գեպս այնտեղ ինտերվենցիայի մասին խոսք չի լինում, և վոչ

մեկը պարտքերի խնդիրը չի ցանկանում պատերազմի միջոցով լուծել:

Պարտքերի, վորպես ինտերվենցիայի պատճառի մասին խոսել սկսեցին միայն 1918 թ. վերջերից, յերբ համալսարհային պատերազմը վերջացել էր արդեն, իսկ մինչ այդ նրանց մասին վոչ վորքի մտքովը չէր անցնում:

Հետագայում՝ ինտերվենցիայի շրջանում մենք իմպերիալիստներին շատ անգամ առաջարկեցինք, վոր ճանաչում ենք Ռուսաստանի պարտքերը և նույնիսկ կսկըսենք վճարել դրանց տոկոսները, յեթե իրենց զորքերը Ռուսաստանից դուրս հանեն, իսկ ինտերվենտները ի պատասխան դրան սկսեցին զենք, հազուստեղեն և ռազմամթերք ուղարկել մեր թշնամիներին, ծախսելով նորանոր միլիարդներ, վորոնց գումարը ցարական Ռուսաստանի պարտքերից պակաս չէր գուցե: Միայն Անգլիան ինտերվենցիայի համար ծախսեց ավելի քան 1 միլիարդ վոսկի, չհաշված ամեն տեսակի ռազմամթերքները: Ո՛վ կհավատա, վոր մի քանի միլիարդ պոկկելու համար, պետք է ծախսել նույնքան, գուցե և ավելի միլիարդներ. իրենց հաշիվն իմացող և ժլատ կպիտալիստներն այնքան հիմար չեն:

Պարտքերի ամբողջ գումարից բոլորովին դուրս պետք է հանվելին պատերազմական պարտքերը: Ֆրանսիացիները և Անգլիացիների հետ ինտերվենցիայից հետո մեր վարած բանակցությունների ժամանակ յերբեք խոսք չի յեղել այն վոխառությունների մասին, վոր կնքել և ցարը պատերազմի ժամանակ:

Այդ պարտքերը լուելյան դուրս էյին հանվում ընդհանուր գումարից, վորովհետև ըստ վերսայլի դաշնա-

զքի, վորը կնքված է «Դաշնակիցների» և Գերմանացիների միջև, Ռուսաստանը վորպես Անգլո-Ֆրանսական բլոկին պատկանող մի յերկիր, իրավունք ուներ ստանալու այն 150 միլիարդ վոսկի մարկի մեծ մասը, վորը դերմանացիները վորպես կոնտրիբուցիա պետք է վճարելին «դաշնակիցներին»: Պարզ է, վոր Խ. Իշխանությունը այդ դրամների բաժանմանը չի մասնակցում և յերբեք էլ չի մասնակցելու, այն դրամների՝ վարունք գերմանական բանվորներից և ալլատավորներից՝ Էն դուրս չորթվում: Ընհդակառակը, հենց խորհուրդները ցույց տվին ամեն տեսակ կոնտրիբուցիաները վոչնչացնելու միակ ճշմարիտ ուղին. այդ հեղափոխությունն էր: Մակայն ձեվականորեն, Խ. Հանրապետությանը, վորպես նախկին Ռուսաստանի ժառանգորդի, վորը այժմ իր ձեռքն է ամփոփում նախկին Ռուսաստանի յերկրների մեծամասնությունը, իրավունք էր վերապահվում ըստանալու այն միլիարդները, վորոնք գերմանացիները վճարելու էյին Փանսիային, Անգլիային և ուրբիներին: Ահա թե ո՛չու վոչ Ֆրանսիական շնածկները և վոչ էլ անգլիական բանդիտները մեզնից չեյին պահանջում այդ պարտքերը, լավ գիտենալով, վոր այդ պարտքերը վողուց ծածկված և յերբածածկված են գերմանական կոնտրիբուցիայով, վորը վորպես վոսկու անձրև թափվում է Անգլիայի և Ֆրանսիայի իմպերիալիստներին գլխին մինչև այսօր:

Մնում էր մինչ պատերազմյան պարտքերի բավականին խոշոր մի գումար, 7½ միլիարդ վոսկի ուուրի: Իայց խնդիրը գումարի խոշորության մեջը չէ: Մինչդեռ ինքնակալությունը պատերազմական պարտքերը կնքում էր ոտար մի պետության միջոցով, կամ

1007
3345

հենց նույն պետութիւնից, մենք այդ 7½ միլիարդ նախապատերազմից պարտքերը կնքել էյինք բորսայի միջոցով: Ռուսական կառավարութիւնը և ուսումնական հասկերը փոխառութիւններ էյին կնքում Փարիզի և Լոնդոնի բորսաներում, իսկ վերջիններս դրամները վերցնում էյին ժողովրդից: Փոխառութիւններ կնքելուց հետո շահույթի մեծ մասն ընկնում էր խոշոր կապիտալիստների ձեռքը, վորպէս «միջնորդական» սոկոսներ, իսկ փոխառութիւնները բաժանւում էյին մանր պահանջատերերի միջև: Այդպիսի մանր պահանջատերերի կազմում է 4 միլիարդ, իսկ ըստ մեր տվյալների մատ 2 միլիոն:

Սակայն այդ էլ հսկայական թիւ է, յեթե աչքի առաջ ունենանք, թե ովքեր են այդ պահանջատերերը: Դրանք մանր բուրժուազիան, շինովնիկութեան ու գյուղացիութեան վերնախաւն է: Պետք է ասել, վոր Ֆրանսական կուլակը շատ է հարստացել ուսումնական փոխառութիւններից: Ռուսական փոխառութիւններն այն ժամանակ համարւում էյին ամենաապահով փոխառութիւնները: Ռուսական փոխառութիւնների համար խոշոր տոկոսներ էյին վճարում: Կարծում էյին, վոր ուսումնական ցարիզը այնքան է ուժեղ, վոր վոչ մի հեղափոխութիւն չի կարող ընկճել նրան: Միլիոնավոր մանր բուրժուաներ իրենց խնայողութիւնները տալիս էյին խոշոր շնաձկներին, վորոնք յերկրի փաստացի տերերն էյին: Դրանից ողտւում էյին իմպերիալիստ վաշխառուները, վորոնք առանց այն էլ հսկայական ողուաներ ունեյին պարտքերից: Պարտքերի պահանջը ինտերվենցիայի իսկական պատճառը չէր, այլ ծառայ-

յում էր վորպէս մի լոգումզ, վորի ողնութեամբ կարելի էր 4 միլիոն մարդկանց զրգուել Սորհրդային Հանրապետութեան դեմ վոչ միայն այդ 7½ միլիարդ ուրուլին պոկելու, այլ և խորհրդային իշխանութիւնը վոչնչացնելու համար:

Անդլիան և Ֆրանսիան պարլամենտական յերկրներ են, պատերազմի համար հարկավոր էր ստանալ պարլամենտի համաձայնութիւնները: Իսկ պարլամենտի համաձայնութիւնը առանց մասսաների համաձայնութեան, առանց վորոչ մասի աջակցութեան՝ ստանալը հնարավոր չէ:

Մանր բուրժուազիայի սնանկացած խավերին, թռչակից զրկված պաշտոնյաներին, իրենց սոկոսներից զրկված մանր սեփականատերերին, այդ բոլոր խավերին որե որ հավաստացնում էյին, վոր բայլէվիկներն են նրանց դժբախտութեան պատճառը, վորովհետեւ չեն վճարում պարտքերը: Իմպերիալիստները այդ խաղով մանր բուրժուական մասսաներին մեր դեմ էյին զրգուում, վորպէսզի ձեռք բերէյին նրանց համաձայնութիւնը ինտերվենցիայի խնդրում:

Իմպերիալիստական քաղաքագետները այդ խաղը հաճախ են կրկնում: Ամեն անգամ, յերբ ինտերվենցիայի մասին խոսք է լինում, յերեւան է դալիս «ուսումնական պարտատոմսեր ունեցողների կոմիտեն» վորի գլուխը կանգնած են խոշոր ֆինանսիստները, դրամատերերը ոչ սկսում էր պարկապողուկի հին նվազը: Հարտարարում են 4 միլիոն պահանջատերերին, թե Ս. Իշխանութիւնը պարտքերը չի վճարում, վոր նրանք այդ պատճառով իրենց դրամները ստանալ չեն կարող և

այն, մի քանի միջոց կրկնվում էր նույնը, ինչպես սպիտակ մուգու հերթաթում :

Նրանցից պահանջվում են նորանոր զոհեր նոր գրամներ խորհուրդների դեմ ինտերվենցիա սկսելու համար: Պարտքերը չեն յեղել և չեն ինտերվենցիայի պատճառը: Պարտքերը ինտերվենտները համար պատրվակ են միայն, մի յոգունդ, վորի միջոցով միլիտանավոր մանր տնտեսատերերին, վորոնց մեջ կան և շատ աշխատավորներ, գրգռում են Խորհրդային յերկրի դեմ:

Ոտարյերկրյա արդյունաբերական ձեռնարկների ազդայնացումը նույնպես չի կարելի համարել ինտերվենցիայի իրական պատճառը: Ընդամենը սղղայնացված և $1\frac{1}{2}$ միլիարդ ուրլուց մի փոքր ավելի: Ծիծաղելի կլինի համիատալ, վոր միայն այդ գումարի համար զոհեյին իրենց աանյակ հաղարավոր զինվորներին, նորանոր միլիարդներ ծախսեյին, մանավանդ վոր, խորհրդային իշխանութունը ինտերվենցիայի ժամանակ համաձայն ևր վորոչ պայմաններով, աղաչանցրված ձեռնարկների տերերի հետ բանակցութուններ սկսել, խոստանալով նրանց ձեռնառու կոնցեսիաներ:

Ինչպես տեսնում ենք, պաշտոնական վերսխաներից վոչ մեկը չի կարելի համարել ինտերվենցիայի բուն պատճառը: Կրկնելով այդ վերսխաները, անվերապահորեն հավատալով նրանց, մեր խորհրդային պատգամավորները տարածում են լոկ այն իլլյուզիան, թե ինտերվենցիայից կարելի յե ալատվել՝ ճանաչելով պարտքերը և վճարելով մի քանի միլիարդ ուրլի:

Այնինչ Լենինը վաղուց էր նշել ու ընդգծել ինտերվենցիայի հիմնական պատճառը:

Ինտերվենցիայի բուն պատճառները պարզելու համար պետք և հիշել, թե ինչպիսի մոմենտում բուրնկվեց Հոկտեմբերյան պրոլետարական հեղափոխութունը: Հեղափոխութունը ծագեց իմպերիալիստական պատերազմի յերեք տարուց հետո, յերբ լայն մասսաների համար արդեն պարզ էր նրա թալանչիական բնույթը: Մասսաները վաղուց հասկացել էյին, վոր պայքարը մղվում և կապիտալիստների շահերի համար, թալանի համար, նոր յերկրներ ձեռք բերելու համար: Յեվ միայն զինվորական դիսցիպլինայի և իմպերիալիստների գործ դրած բռնության շնորհիվ, մասսաները դեռ շարունակում էյին մասնակցել իմպերիալիստական սպանդանոցին: Իմպերիալիստական պատերազմը ստեղծեց հեղափոխական միջոցորտ: Իմպերիալիստները շատ լավ գիտակցում էյին, վոր բազական և մի թեթև աղանչան, թեթև սոցիալական շարժում, վոր այդ միջոցորտը վերածվի հեղափոխության: Ահա թե ինչու նրանք, վորոնք բանվորական մասսաներին բացատրում էյին կատարվող անց ու դարձը, յենթարկվում էյին պոլիցիական սոսկալի տերրորի: Խմբերով նրանց բանտն էյին նետում, աքսորավայրում փթեցնում և ուղմա-ղաչուային դատարանով դատում: Իսկ մեզ մոտ, Ռուսաստանում, մի ամբողջ յերկիր հանկարծ, դուրս յեկավ պատերազմից, 150 միլիոն մարդիկ ձեղքեցին իմպերիալիստների շղթան և աղաղակեցին այն սարսափից, վորը ամեն ոք պահանջում էր հարյուր հաղարավոր զոհեր:

Բուրժուազիան վորքան աշխատում էր, վոր Խ.

Հանրապետութեան մասին վոչ մի լուր չտարածվի իր բանակում, իդուր եր, ուսական պրոլետարիատի հեռոսական որինակի լուրը տարածվեց աշխարհի բոլոր անկյուններում :

Բացի այդ : Մեր ոգտին ազիտացիա եր մղում հենց ինքը բուրժուալիան : Յերր Փարիզի մամուլը վաշնասուն եր բարձրացնում, թե բայլչեիկները խլել են հողերը, քչել են կապիտալիստներին, գրավել են գործարաններն ու Փարրիկաները, ամեն մի բանվոր պատասխանում եր «հրաշալի յե, հենց այդ ե իսկական բանվորական քաղաքականությունը» : Այժմս նուշնպես, յերբ իմպերիալիստները բղավում են, վոր մենք մեր «Գեմպինգով» խորացնում ենք ճգնաժամը, նրանք վորոչ իմաստով մեր ոգտին ազիտացիա յեն մղում :

Քանի վոր Խ. Ռուսաստանը ապրանքներ ե արտահանում, նշանակում ե, վոր արտադրում ե, մինչդեռ վաղուց չե վոր բուրժուական լրագրերը պնդում եյին, թե բայլչեիկները յերկրի տնտեսությունը քայքայեցին :

Հոկտեմբերյան հեղափոխությունը համաշխարհային նշանակություն ունեցող սոցիալական վիթխարի մի շարժում եր, վորը հեղափոխությունը դարձրեց սրվա սպառնալիք : Ռուսական պրոլետարիատի ե գյուղացիության փորձը իր գոյության ամեն մի որով ցուցց ե տալիս բուրժուական յերկրների բանվորներին ե գյուղացիներին, թե պատերազմի սարսափներից ազատվելու միակ յելըրը ուսաների որինակին հետեվելն ե տապալել կապիտալիստներին, գրավել իշխանությունը ե վերջ դնել իմպերիալիստական պատերազմին :

Քանի դեռ գոյություն ունի ե աճում ու զարգանում ե Խորհրդային Հանրապետությունը, իմպերիա-

լիստական պատերազմի ստեղծած լարված կացության պայմաններում, առաջլա պես ժողովրդական մասսաներին հրամաններ արձակել անհնար եր : Ամենքին հայտնի յե, վոր Խ. Հանրապետության ամեն մի քայլը պրոլետարիատի լայն մասսաների վրա նոր, հեղափոխականացնող ազդեցություն ե գործում, մի նոր քայլ ե դեպի առաջ հեղափոխության ծավալման համար : Լենինն ինտերվենցիայի շարժիչ ուժը բնորոշելիս ասում եր. «չլինի թե մեր հրդեհի կայծերը չբոցավառեն համաշխարհային հեղափոխության հրդեհը» : Հեղափոխության վախը, այն վախը, վոր համաշխարհային պրոլետարիատը սկսել ե զաթնել, կը կրկնի ուսական փորձը, ահա թե ինչն եր վորոչում ե ուղղություն տալիս իմպերիալիստ գիշատիչների քայլերին : Պետք ե տապալել Խ. Հանրապետությունը, համաշխարհային հեղափոխության այդ հնոցը, բնաջինջ անել բայլչեիկներին ե այդպիսով հանդցնել հեղափոխական ջահը, վորի կայծերը այտոր կամ վաղը կարող են համաշխարհային հեղափոխության հրդեհն առաջացնել—ահա սայն ինտերվենցիայի հիմնական պատճառը :

Պարզ ե, վոր խորտակելով Խորհրդային իշխանությունը, անտանտայի իմպերիալիստները մեր յերկրը զաղութի կվերածեյին, նրա հետ ավելի խիստ կը վարվեյին, քան Գերմանիայի հետ ե վիվերականդենն հին ուժիմը ամենավատ ձևով :

Ինչպես տեղի ունեցավ հենց ինքը ինտերվենցիան : Հենց վոր պարզվեց, թե մենք գերմանացիների հետ հաշտություն ենք կնքել ե դրանով դադար ենք ձեռք բերել սոցիալիստական շինարարության համար,

«դաշնակիցները» վոր քիչ տաջ դաշինքի առաջարկութեամբ խորհրդային կոմիսարիատները չեմքերն եյին մաշում, ինտերվենցիան նորից որակարգել հարց դարձրին: Տենդագին պատրաստվելով ինտերվենցիայի, իմպերիալիստները սրտադող ասում եյին «բայց չէիք ներսը ժողովրդին տվին հող, տվին խաղաղություն, բսկ յեթե հացն ել տան, նրանք անհաղթելի կդառնան: Նրանց՝ առաջին մտադրութիւնն եր մեր դեմ հանել ճապոնացիներն: Ճատրոսլան, ինչպես հայտար յն, արանսիայի ու Անդլիայի դաշնակիցն եր, բայց պատերազմի մեջ չեր քաշված: Նա ուներ թարմ և զինված, նոր զինակոշի յնթարկված բանակ: Յենթադրվում եր, վոր ճապոնացիները կզբաւին Ս. Ռուսաստանի մի մասը, կողմեն հակահեղափոխութեանը խորհրդային Իշխանութիւնը տապալելու համար և գերմանացիների ռազմաճակատ կտոեղծեն: Նույնիսկ յեթե ճապոնացիներին չհաջողվեր Արեւելեյան ռազմաճակատը վերականգնել, ապա գեթ նրանք դեպ իրենց կքաշեն խորհրդային զորքերը, կկազմակերպեն հակահեղափոխութիւնը ու կողմեն նրան խորհրդային Իշխանութիւնը տապալելու դործում:

Ճապոնիան հաճույքով ընդունեց այդ ծրագիրը: Նա հրճվում եր կարմիր վտանգի վոչնչացման և Սիբերի հարուստ շրջանների զբաւման հեռանկարից: Բայց ճապոնիայի յելույթը չեր համապատասխանում բոլոր դաշնակիցներին շահերին: Ֆրանսիան կողմնակից եր ճապոնական զորքեր ուղարկելուն, իսկ ամերիկացիք, վորոնք դեռ չմաքրված հին հաշիվներ ունեյին ճապոնիայի հետ, վորը խաղաղ Ուիկիանոսի վրա նրանց մըրցակից և հանդիսանում, վախենում եյին, վոր հասար-

նացիները Ս. Հանրապետութեան սահմանները՝ Սիբերի մտնելով, վոչ այնքան կպայքարեն խորհրդային Իշխանութեան դեմ, կձգտեն նրան տապալել, վորքան կհաստատվեն Սիբերում: Ճապոնական իմպերիալիստները անխոցելի կդառնան և կամբանան հետադայում Ամերիկայի դեմ պայքար մղելու համար: Ամերիկան ճապոնական ինտերվենցիային դեմ դուրս յեկավ, իսկ Ամերիկային հաշիվ չառնել չեր կարելի, չե՞ վոր նա պատրազմի համար դրամ եր տալիս և հենց այդ մոմենտին եր 1918 թ. ապրիլին, վոր մեկ միլիոն թարմ զորք հանեց Յեվրոպա: Հարկավոր եր զիջել, ճապոնացիները մի քանի որ Վրադիվաստոկում մնալուց հետո հետ քաշվեցին:

Հարկավոր եր այլ ուժեր և միջոցներ փնտրել ինտերվենցիայի համար:

Վորովհետև դերմանացիների դեմ պատերազմը դեռևս շարունակվում եր և վորքե զինված ուժ մեր դեմ ուղարկելը հնարավոր չեր, մանավանդ վոր Արևմտյան սահմանը զբաւել եյին գերմանացիները, իսկ պտույտ գործելով՝ Վրադիվաստոկի վրայով զորք ուղարկելը հեռու յեր, «դաշնակիցները» մշակեցին նոր ծրագիր, վորը կայանում եր հետևյալում:

Մուրմանսկում կանդնած եր անդլիական եսկադրան, պաշտպանելու այն ռազմամթերքը և պարենը, վոր անդլիացիները ուղարկել եյին ցարին, գերմանացիների դեմ կովելու համար: Ողտվելով այն հանդամանքից, վոր այդ եսկադրան կանդնած և այնտեղ խորհրդային Իշխանութեան թուլութեամբ, վճռեցին նրա ուժեղացման համար ուղարկել 500-600 մարդուց բաղկացած մի ջոկատ, դեներալ Մեյնարի հրամանա-

սարսափյաճը: Քոկտտի կազմը շնչին եր, բայց նա հմտորեն եր կազմակերպված: Այդ 500-600 հոգին բացառապես ոֆիցերներ և հրահանգիչներ էյին, վորոնք ուղղմական ու կազմակերպչական մեծ փորձառություններով էյին ոժտված: Յենթադրում էյին, վոր ոֆիցերների ու հրահանգիչների այդ քանակը բավական է 30 հազարանոց մի բանակ պատրաստելու համար: Իսկ այդ բանակը յենթադրվում եր գորահավաքի յենթարկել տեղական ուսւ աղգարանակությունից հեղաշրջումից հետո:

Միաժամանակ «Դաշնակիցների» գործակալներն սխեսեին ապստամբություններ պատրաստել ներսից: Դեպի Հյուսիս էյին ուղարկվում ուսւ սպաներ, վորպեսզի նրանցից ձեռքի տակ ունենան, բանակ կազմակերպելու համար, իսկ մի շարք քաղաքներում—Յարոսլավում, Վալոգդայում և այլ տեղերում զինված յեւլույթներ կազմակերպվեցան, վորպեսզի զբանով հեշտացնեն սկուպացիան գորքի առաջխաղացումը:

Բացի այդ բոլորից, յենթադրվում եր իորհրդային Իշխանության դեմ ուղարկել Չեխո-Սլովակների կորպուսը: Այդ կորպուսը կազմակերպված եր դեռևս ցարի ժամանակ պատերազմի ընթացքում այն Սլավոններից, վորոնք կամ Ալյստրիական բանակից գերի էյին ընկել, կամ ուղղակի անցել էյին ուսւների կողմը: Պատերազմի ընթացքում նրանց զենք մատակարարեցին և բաժանեցին զնդերի, թվով մոտ 60 հազարի, խոստացան Չեխո-Սլովակիայի անկախությունը և քեցին գերմանացիների դեմ: Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, յերբ գերմանացիների հետ հաշտություն կընքվեց, վորոշվեց Սիբիրի վրայով, Վլադիվաստոկի

գծով, նրանց ուղարկել Արևմայան ուղղաձևատ, Փրանսիա, թող այնտեղ յեթե ուղում են, շարունակեն կռիվը գերմանացիների դեմ: Այդ Չեխո-Սլովակների հետ Փրանսիացիները կապ էյին հաստատել դեռ Հոկտեմբերյան հեղափոխության առաջին որերից սկսած, առաջարկելով նրանց անմիջապես Ս. Իշխանության դեմ դուրս գալ: Չեխերը դուրս շեկան, հալանորեն այն պատճառով, վոր Փրանսիացիների հետ համաձայնության շեյին յեկել, կամ դուցե բանակցությունները խզվել էյին Իրեստի հաշտության հետևանքով: Հետո «դաշնակիցները» ուշքի յեկան և վճռեցին Չեխո-Սլովակներին շրջել դեպի Հյուսիս, Մուրմանսկու եկսպեդիցիային ղիմավորելու: «Դաշնակիցների» ներկայացուցիչները նորից սկսեցին կոմիսարիատների շեմքերը մաշել, համառորեն պահանջելով փոխել Չեխո-Սլովակների մարշրուտը: Ամբողջ ծրագիրը կայանում եր նրանում, վոր ուժերի կենտրոնացման միջոցով հարվածեն Մոսկվային և Լենինգրադին ամեն կողմերից:

Իորհրդային Իշխանությունը գուշակեց այդ վոչ այնքան խորամանկ ծրագիրը, մերժեց Չեխո-Սլովակներին հոտ դարձնել ու սկսեց մայրաքաղաքը մաքրել «դաշնակից» լրտեսներից:

Իմպերիալիստները հասկացան, վոր իրենց ծրագրերը ջուրն են ընկնում, շտապեցին հրաման արձակել Չեխո-Սլովակներին հենց իրենց գտնված տեղերում ապստամբվելու: Չեխո-Սլովակները, վորոնք ձգված էյին Սիբիրի մեծ յերկաթուղագծի յերկարությամբ, միանգամից ապստամբեցին Կազանում, Չելյաբինսկում, Տոմսկում և Իրկուտսկում: Միաժամանակ կատարված այս յեւլույթը վկայում է, վոր նախո-

րնք ամեն ինչ պատրաստված էր: Հենց այդ որերում, Յարոսլավլում հակահեղափոխականները յելույթ ունեցան, չսպասելով նույնիսկ Մուրմանսկի դեսանտի ատի իջնելուն: Իսկ քիչ հետո, անգլիացիները վերջացես, 1918 թ. Ոգոստոսի 2-ին ատի են իջնում Արխանգելսկում:

Լենինգրադում հայտնաբերվեց մի դավադրութուն, վորը կաղճակերպվել էր անգլիական դեսպանութան անդամ Լոկկարտի կողմից. դեսպանատան անդամներից մեկը լեյտենանտ Կրոմսլը, իր մոտ յեղած փաստաթղթերով միասին, ինչպես ասում են, հենց «հանցագործութան տեղում» բռնվեց և չցանկանալով հանձնել այդ թղթերը մեր չեկիստներին, կրակոցներով դիմավորեց նրանց:

Միջոցներ ձեռք առնվեցին մաքրելու և այն քաղաքները, վորտեղ ծրագրված էր ապստամբութուն բարձրացնել:

«Ապիտակ դաշնակիցներին» ծրագրերը խանդարվեց: Յարոսլավլում հակահեղափոխութունը ժամանակից վաղ սկսեց, բայց այդ ինտերվենցիոնիստների մեղքը չէր, չեկան արթուն էր:

Չխո-Սլովակների ապստամբութունը արմատապես փոխեց յերկրում ուժերի փոխհարաբերութունը: Հոկտեմբերին ռուսական հակահեղափոխութունը դեմ առ դեմ կանգնելով պրոլետարիատին, ջախջախված էր: Մեկը չկար, վոր ոգնութան հասներ նրան, նույնիսկ կուլակները զբաղված էին կարվածատերերի հողերը խլելով: Բուրժուազիան մենակ էր մնացել, վորովհետև իր հետ մասսա չունեցր:

Մակայն Մորհրդային Իշխանութունը վոչ միայն հողը խլեց կարվածատերերից, այլ հեղափոխութան դարձացման գծով արևիկ հեռուն դնաց: Նա դյուղում ծավալեց պրոլետարիան հեղափոխութունը, սկսեց կաղճակերպել չքավորական կոմիտեներ, կովել կուլակութան դեմ: Կուլակները զաղաղեցին: Այս ու այն տեղ սկսվեցին կուլակների ապստամբութունները, վորոնց հետ հաշիվները հեշտությամբ մաքրվեցան հենց տեղական ուժերով: Բոլոր կուլակային ապստամբութունները, վոր արևիկ նման տարածվեցին ամբողջ յերկրում, տեղական բուլյթ էլին կրում և չեյին պահանջում խորհ. յերկրի բոլոր ուժերի մոթիլիզացիան: Բայց ահա հանդես յեկան Չխո-Սլովակները, անգլիացիները, Փրանսիացիները: Կուլակը իսկույն յերևվաց և նորից դուրս յեկավ խորհուրդները դեմ: Կուլակային ապստամբական առանձին բռնկումները վերածվեցին հակահեղափոխական մի ընդհանուր ապստամբութան: Այն, ինչ վոր տեղական բուլյթ էր կրում, այժմ ընդհանուր յերևույթ դարձավ: Յերևացին դրամ, զենք, վոր տալիս էին «դաշնակիցները»:

Ինտերվենտները կուլակին արթնացրին: Կուլակներին հետեվեց տատանվող միջավի երի վորոչ մասը, դիտավորապես այն չքաններում, վորտեղ կարվածատերեր չկային և դյուղացիները քիչ հող էլին ստացել:

Ռուսական հակահեղափոխութունը, վորը Հոկտեմբերին չունեց վոչ մի արևակցութուն, չորհիվ Չխո-Սլովակների ապստամբութան և «դաշնակիցներին» ինտերվենցիայի ստանում և մասսայական ոգնութուն հանձինս կուլակների ու դյուղացիական այն խոչոր խրմբի, վորը բարձրացել էր պրոլետարիատի դիկտատու-

բայի դեմ: Սկսվեց նոր քաղաքացիական պատերազմ, վո-
բը տեւեց 1918 թ. մինչև 1920 թ.: Ինտերվենցիան առա-
ջացրեց քաղաքացիական պատերազմը, կազմակերպեց
կուլակներին և դուրս բերեց նրանց խորհուրդների դեմ:
Կալվածատերերը, բուրժուազիան և կուլակությունը
հակահեղափոխական մի բլոկ կազմած դուրս յեկան
խորհրդային յերկրի դեմ:

Այս բլոկին ղեկավարում էին ինտերվենտները:
Բոլոր հակահեղափոխական «կառավարությունները»
մոտ նստած էին «դաշնակիցները» ներկայացուցիչնե-
րը: Կոլչակի մոտ նստած էր Ֆրանսական զենքալ
ժենները, նույն տեղում Անդրևայի շահերն էր պաշտպա-
նում զենքալ Նոկսը, վոր հետագայում, վորպես ին-
տերվենցիայի մասնագետ, յեկավ Դենիկինի մոտ:

Հուսիսում նստած էր զենքալ Պոցլը, վորին հետո
փոխարինեց Այրոնսայդը: Իմպերիալիստները բոլոր
չինովնիկական ներկայացուցիչները հակահեղափո-
խությունն առջ էին մղում, ողնում էին նրան, սա-
լով հրահանգիչներ, դրամ, ոստիմամթերք, հագուստ-
դեմ: Մինչև այժմ մենք ղեռ չենք հաշվել թե, ղիցուք,
վորքան և ուղարկված Դենիկինին և վորքան դեպի Հու-
սիս՝ Միլերին և այլն: Հայտնի յե միայն, վոր մենակ
Ճրանսիան 1919 թ. Կոլչակին ուղարկել և 1700 ղնդա-
ցիրներ, 30 տանկեր, մի քանի տասնյակ թնդանոթներ
և տասնյակ էջերոն ուղղամթերք: Մեր ձեռքն ընկավ
էջերոնները այն ցուցակը, վոր Կոլչակին ողնության
էին զնում: Որ չեր լինում, վոր մեկ կամ ավելի
զնացքներ չանցնեյին, բարձված կամ ուումբերով, կամ
հրացաններով և կամ չինելներով:

Անգլիական գինվորական նախկին մինիստր Չեր-

չիլը, վոր ինտերվենցիայի խոչոր կազմակերպիչներից
մեկն էր, պարձենալով ասում էր, վոր միայն Դենիկինի
բանակը թվով 600 հազար մարդ ամբողջովին սպառա-
ցինված էր իր միջոցներով, իհարկե վոչ իր անձնա-
կան, այլ անդլիական ժողովրդի միջոցներով:

Վրանգելը վոտքի կանչեց գլխավորապես Ֆրան-
սիացիների միջոցներով և այլն, մինչև ամենավերջին
մանր ու մունր բանդլաները, ատամաններն ու բաակա-
ները միենույն գրպանից էյին սնվում:

Ռուս կալվածատերերը և կապիտալիստները
կկաղմակերպեյին քաղաքացիական կոիլ առանց ոտար-
յերկրյա բուրժուազիայի: Կուլակը պետք է վոր դուրս
դար թ. իշխանության դեմ առանց Չեխո-սլովակների
չարժման: Ինչ էլ վոր լիներ, քաղաքացիական կոիլը
պետք է տեղի ունենար, վորովհետև իրար թշնամի
դատակարգերն առանց կոիլի անձնատուր չեն լինի,
առանց կոիլի ասպարեղից չեն հեռանա: Միայն քաղա-
քացիական անողոք կոիլ մղելով կալվածատիրոջ,
բուրժուազիայի և կուլակի դեմ, սրբոյնտարիատը կա-
րողագամ յուր հետեից տանել աշխատավոր գյուղա-
ցիության լայն խավերն և գրավել ու պահպանել սո-
ցիալիստական հասարակություն կաղմակերպելու հնա-
րավորությունը:

Ինտերվենցիան դարձավ հակահեղափոխության
գլխավոր շարժիչ ուժը: Կուլակը առանց Չեխո-սլովակ-
ների էլ պետք է վոտքի յեյներ Սոբհրդային իշխա-
նության դեմ, քաղաքացիական պատերազմ տեղի պի-
տի ունենար անպայման, վորովհետև թշնամի դատա-
կարգերը չէյին հանձնվի ու խողաղ կերպով չէյին հե-
ռանա թատերաբեմից: Միայն կալվածատերերի, բուր-

ժողովրդային և կուլտուրային դեմ քաղաքացիական անու-
զոր պատերազմ մղելով, պրոլետարիատը կարողացավ
աշխատավորական դյուղացիական լայն մասսաներին իր
հետևելից տանելով հաղթել և սոցիալիստական հասա-
րակության կառուցումը հնարավոր դարձնել: Սա-
կայն, նման պատերազմում պրոլետարիատի համար
դժվար չէր ձեռք բերել հաղթանակը, միայն ներքին
ուժերով հակահեղափոխությունը չէր կարող վրջ
միայն հաղթել պրոլետարիատին և դյուղի չքավոր-
միջակ խավերին, այլև չէր կարող քիչ թե շատ տեղական
դիմադրություն ցույց տալ մասսաների դրոհին:

Ինտերվենցիան տեղական, անջատ յելույթները
միաձուլեց և դարձրեց համառուսական հակահեղափո-
խություն: Ինտերվենցիան տեղ նրան ամեն ինչ և բազ-
մապատկեց նրա ուժերը: Ինտերվենցիան ուսուսական
հակահեղափոխությանը հրահրեց, կազմակերպեց, լու-
սատաղինեց, և միացրեց, սգնություն ցույց տալով
նրան քաղաքացիական պատերազմի ամբողջ ընթաց-
քում:

Ինտերվենցիայի այս ամբողջ գործունեությունը
ժողովրդի աչքից թաղցնում և արդարացնում էլին մի-
ջադրային մենչևիկները:

Պատերազմի ընթացքում 2-րդ Ինտերնացիոնալը
բաժանվեց առանձին ազգային կուսակցությունների,
վորոնցից յուրաքանչյուրն իրենց տերերի հրամանով
դնաց կովելու մյուս ջոկատների դեմ: Մենչևիկներն էլ
ինտերվենցիայի ժամանակ յետ չմնացին իրենց տերերից:
Ինտերվենցիայի ժամանակ մինչև 1919 թվի յերկրորդ
կեսը, 2-րդ Ինտերնացիոնալը մնաց բաժանված յերկու
թշնամի բանակների, սակայն իմպերիալիզմի կոնվը սո-

ցիալիզմի դեմ նրանց միացրեց: Ոտրհ. Հանրապետու-
թյան դեմ դուրս յեկան Գերմանական դավաճանները՝
կառուցու և Հելֆերդինգի դիտավորությամբ: Գերմա-
նական սոցիալ-չովինիստները պաշտպանում էլին իրենց
կայլերին: Նրանք ցնծում էլին կարմիր Ֆինլանդիայի
տապալման առթիվ և պաշտպանում էլին գերմանական
իմպերիալիստների արշավանքը Ուկրայինայի վրա, իսկ
յերբ բռնկվեց գերմանական հեղափոխությունը, սո-
ցիալ-դավաճանները հրաժարվեցին ընդունել խորհրդ-
դային բանվորների ոգնությունը, վորոնք Բեռլինի քաղ-
ցած պրոլետարիատին ուղարկել էլին մեկ էլեյուն հաց 7
Հենց գերմանական մենչևիկները Բեռլինի խորհրդային
դեպանությունը դուրս քեցին, վախենալով նրա հե-
ղափոխական ազդեցությունից:

Ճրանսական, անգլիական, Ամերիկյան և իտալա-
կան մենչևիկներն ևս նույնպիսի հնազանդությամբ կա-
տարում էլին իրենց տերերի հրամանները: 1918 թ. սեպ-
տեմբերին «դաշնակից» մենչևիկները հավաքվեցին Լոն-
դոնում, վորտեղ վոչ միայն վորոշեցին պաշտպանել ին-
տերվենտներին, այլ և ավելի հարմար լողունդներ թելա-
դրեցին: Մենչևիկների կոնֆերենցիան հայտարարեց,
թե ինտերվենտները Ս. Ռուսաստանի վրա են դնում վոչ
թե այն նպատակով, վոր նրա ներքին գործերին միջա-
մտեն և խորհրդային քաղաքացիներին իրենց կամբը թե-
լադրեն, այլ վորպեսզի հաստատեն խաղաղություն և
գեմոկրատիա:

Տերերը լեցին իրենց լակեյների խորհուրդները:
Ինտերվենտներն արյան մեջ լսեղողում էլին Ոտրհրդային
չարժումը խաղաղության լողունդի ներքո: Նրանք հա-
նուն դեմոկրատիայի գնդակահարում էլին հարյուր հա-

ցարափոր մարդիկ: Նրանք պաշտպանում էին Կոլչակի և Գենիկինի արյունալի ուժիմը և Խորհ. Հանրապետության ներքին գործերին չմիջամտելու լողունգով, ոգնում էին վերսկանդնելու ցարական միապետության վայրենի տերրորը:

